Հիմք ընդունելով Վանաձոր համայնքի ավագանու 30 ապրիլի 2021 թվականի թիվ 52, Վանաձոր համայնքի ղեկավարի 24 մայիսի 2021 թվականի թիվ 1115 որոշումները, համայնքապետարանի աճուրդային և մրցութային հանձնաժողովի հողամասն աճուրդով վաճառելու մասին 28 հունիսի 2021 թվականի թիվ 6/2-26 արձանագրությունը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ **որոշում եմ.**

1. Նարեկացու փողոց, թիվ 10/32-1՝ 0,00198հա մակերեսով, 06-001-0262-0104 ծածկագրով, թիվ 01062021-06-0028 անշարժ գույքի համայնքային սեփականության իրավունքի գրանցման վկայականով հողամասը, ավտոտնակների կառուցման համար, 100000 (հարյուր հազար) ՀՀ դրամով օտարել 2021 թվականի հունիսի 28-ին Վանաձորի համայնքապետարանում անցկացված աճուրդի արդյունքում հաղթող ճանաչված Ռոբերտ Նալբանդյանին:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Ռոբերտ Նալբանդյանի հետ տասներկուօրյա ժամկետում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՄԱՍԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հուլիսի 06
ք.Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 հուլիսի 2021 թվականի N 1411


ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ԲԱՆԱԿԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 13/1-24 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ
ՀՈՂԱՄԱՍԸ ԽԱՆՈՒԹԻ ԸՆԴՀԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՍԱՐԳԻՍ ՎԱՆՅԱՅԻ
ՓԱՀԼԵՎԱՆՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սարգիս Վանյայի Փահլևանյանի դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 21062021-06-0026 և Սարգիս Վանյայի Փահլևանյանի անվամբ անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1849486 վկայականները, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 8-րդ կետերով, ՀՀ կառավարության 26.05.2016թ. թիվ 550-Ն որոշման 1-ին և 2-րդ կետերով՝ **որոշում եմ.**

1. Վանաձոր քաղաքի Բանակի փողոց թիվ 13/1-24 հասցեում գտնվող, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող, Վանաձոր համայնքի սեփականություն հանդիսացող 20.0քմ մակերեսով հողամասը, համաձայն Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 21062021-06-0026 վկայականի, հողի կադաստրային արժեքով՝ 210280 (երկու հարյուր տասը հազար երկու հարյուր ութսուն) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Սարգիս Վանյայի Փահլևանյանին՝ խանութի ընդլայնման նպատակով:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Սարգիս Վանյայի Փահլևանյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել 20.0քմ մակերեսով հողամասի առուվաճառքի պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ՝



ՄԱՍԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.iori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 հուլիսի 2021 թվականի N 1412

ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՊՈՂՈՏԱ, ԹԻՎ 58/12-1 ՀԱՍՑԵՈՒՄ
ԳՏՆՎՈՂ, ԱՐՄԵՆ ՍԵՐՅՈԺԱՅԻ ՈՓՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արմեն Սերյոժայի Ուփյանի լիազորված անձ Կարեն Գարիկի Քալաշյանի դիմումը, 30.04.2019թ. տրված լիազորագիրը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման թիվ 26052020-06-0045 վկայականը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2002թ. փետրվարի 2-ի թիվ 88 որոշումով, 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4) ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Փոխել Վանաձոր քաղաքի Բաղրամյան պողոտա, թիվ 58/12-1 հասցեի 486.22քմ ընդհանուր մակերեսով շինության գործառնական նշանակությունը՝ որպես հասարակական գործառնական նշանակության ավտոլցավորման և գազալցման կայանի:
2. Շինության գործառնական նշանակության փոփոխության համար շինարարության թույլտվություն չի պահանջվում:
3. Հաստատել սույն որոշման 1-ին կետում նշված գույքի փոստային հասցեն՝ ք. Վանաձոր, Բաղրամյան պողոտա, թիվ 58/12-1 ավտոլցավորման և գազալցման կայան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՄԱՍԻՔՈՒՆ ԱՍԼԱՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Գաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.ori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 հուլիսի 2021 թվականի N 1413

ՅՈՒՐԻ ԳԵՈՐԳԻԻ ՊՈԴՈՍՅԱՆԻՆ ԲՆԱԿՄԱԿԵՐԵՍ ՀԱՏԿԱՅՆԵԼՈՒ ԵՎ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՐԻԻ ՄԱՐԶԻ ՎԱՆԱՁՈՐԻ
ՔԱՂԱՔԱԿԵՏԻ 2007թ.-ի ՓԵՏՐՎԱՐԻ 28-Ի ԹԻՎ 221 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ
ԿՈՐՅՐԱԾ ՃԱՆԱՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Յուրի Գեորգիի Պոդոսյանի դիմումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով՝ **որոշում եմ**.

1. Յուրի Գեորգիի Պոդոսյանին հատկացնել ժամանակավոր բնակմակերես՝ Երևանյան խճուղի թիվ 90 հանրակացարանի թիվ 312 սենյակը:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձորի քաղաքապետի 2007թ.-ի փետրվարի 28-ի «Լիլի Հովհաննեսի Հովհաննիսյանին բնակմակերես հատկացնելու մասին» թիվ 221 որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՄԱՍԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հուլիսի 07
Ք.Վանաձոր





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.iori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 հուլիսի 2021 թվականի N 1414

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԾԱՏՈՒՐՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 48-1/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ,
ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱԶՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ
ՎԻԳԵՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 13 ԱՊՐԻԼԻ 2021
ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 760 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վիգեն Ալեքսանդրի Թումանյանի դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 07062021-06-0038 վկայականը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 48¹-րդ հոդվածով և 76-րդ հոդվածի 2-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 12.04.2001թ. թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 46.2-րդ կետի ա) ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Վանաձոր քաղաքի Ծատուրյան փողոց թիվ 48-1/2 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին դասվող 19.8քմ մակերեսով հողամասը, համաձայն Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 07062021-06-0038 վկայականի, կառուցապատման իրավունքով, 10 տարի ժամկետով տրամադրել Վիգեն Ալեքսանդրի Թումանյանին՝ ավտոտնակ տեղադրելու նպատակով:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Վիգեն Թումանյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել 19.8քմ մակերեսով հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագիր՝ 1.0քմ մակերեսով հողամասի համար ամսական վճարը սահմանելով 18 (տասնութ) ՀՀ դրամ:

3. Ուժը կորցրած ճանաչել Վանաձոր համայնքի ղեկավարի 13 ապրիլի 2021 թվականի «Վանաձոր քաղաքի Ծատուրյան փողոց թիվ 48-1/1 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված հողամասը Վիգեն Ալեքսանդրի Թումանյանին կառուցապատման իրավունքով տրամադրելու մասին» թիվ 760 որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՄԱՍԻՆՈՒ ԱՍԼԱՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.iori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 հուլիսի 2021 թվականի N 1415

ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ԿԱՄՈՅԻ ՓՈԴՈՅ ԹԻՎ 39 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ
ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱԿՈՐ ՊՈՂՈՍԻ
ԿԱԶԱԿՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ
ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հակոբ Պողոսի Կազակյանի (ծնված՝ 16.09.1963թ.) դիմումը, 29.10.1986թ. տրված անհատական բնակելի տան տեխնիկական անձնագիրը, 12.01.2006 թվականի ըստ կտակի ժառանգության իրավունքի թիվ 290 վկայագիրը, ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ ԱԶ-ի կողմից տրված հողամասի հատակագիծը, մասնագիտական եզրակացությունը, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 26.05.2021թ. տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 1-72/21 Ի եզրակացությունը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Կամոյի փողոց թիվ 39 հասցեում կառուցված բնակելի տունը, շինությունները և դրանց զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ օրինական 502.9քմ մակերեսով հողամասը չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Բնակելի տունը կառուցվել է 1948-1990թթ. և դրա կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 502.9քմ:

Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4) ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել Հակոբ Պողոսի Կազակյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Կամոյի փողոց թիվ 39 հասցեում գտնվող օրինական 502.9քմ մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:
2. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
3. Վանաձոր քաղաքի Կամոյի փողոց թիվ 39 հասցեում գտնվող գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Կամոյի փողոց, թիվ 39, բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՄԱՐԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 հուլիսի 2021 թվականի N 1416

ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ԴԵՄԻՐՃՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 5 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐԱՐԱՏ ԱԼՔԵՐՏԻ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արարատ Ալբերտի Հովսեփյանի (ծնված՝ 18.09.1962թ.) դիմումը, 25.02.1992թ. տրված անհատական բնակելի տան տեխնիկական անձնագիրը, ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱԶ-ի կողմից տրված տեղագրական հատակագիծը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Դեմիրճյան փողոց, թիվ 5 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 400.0քմ և կից 173.2քմ մակերեսներով հողամասերը և դրանց վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Հողամասի ընդհանուր մակերեսը կազմում է 573.2քմ, որը հանդիսանում է ընդհանուր օգտագործման հողամաս երկու սեփականատերերի՝ Արարատ Ալբերտի Հովսեփյանի և Ալբերտ Արմենակի Հովսեփյանի միջև: Արարատ Ալբերտի Հովսեփյանի բաժնեմասը կազմում է 286.6քմ ((400.0+173.2) :2): Անհատական բնակելի տունը կառուցվել է 1992 թ-ին:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 189-րդ և 190-րդ հոդվածներով, 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4) ենթակետով՝ որոշում եմ.

1. Ճանաչել Արարատ Ալբերտի Հովսեփյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Դեմիրճյան փողոց, թիվ 5 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 200.0քմ մակերեսով հողամասին կից 86.6քմ մակերեսով հողամասի նկատմամբ:
Հողամասի ընդհանուր մակերեսը կազմում է 573.2քմ, որը հանդիսանում է ընդհանուր օգտագործման հողամաս երկու սեփականատերերի՝ Արարատ Ալբերտի Հովսեփյանի և Ալբերտ Արմենակի Հովսեփյանի միջև: Արարատ Ալբերտի Հովսեփյանի բաժնեմասը կազմում է 286.6քմ ((400.0+173.2) :2):

2. Ճանաչել Արարատ Ալբերտի Հովսեփյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Դեմիրճյան փողոց, թիվ 5 հասցեի 286.6քմ ((400.0+173.2) :2) մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:

3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծով:

4. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել նոր փոստային հասցեն՝ ք. Վանաձոր, Դ. Դեմիրճյան փողոց, թիվ 5 բնակելի տան համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՄԱՍԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հուլիսի 07
ք. Վանաձոր





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 հուլիսի 2021 թվականի N 1417

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԴԵՄԻՐՃՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 5 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱԼԲԵՐՏ ԱՐՄԵՆԱԿԻ ՀՈՎԱՏՓՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ալբերտ Արմենակի Հովսեփյանի (ծնված՝ 18.12.1931թ.) դիմումը, 25.02.1992թ. տրված անհատական բնակելի տան տեխնիկական անձնագիրը, ԳԱՄՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱԶ-ի կողմից տրված տեղագրական հատակագիծը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Դեմիրճյան փողոց, թիվ 5 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 400.0քմ և կից 173.2քմ մակերեսներով հողամասերը և դրանց վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Հողամասի ընդհանուր մակերեսը կազմում է 573.2քմ, որը հանդիսանում է ընդհանուր օգտագործման հողամաս երկու սեփականատերերի՝ Ալբերտ Արմենակի Հովսեփյանի և Արարատ Ալբերտի Հովսեփյանի միջև: Ալբերտ Արմենակի Հովսեփյանի բաժնեմասը կազմում է 286.6քմ ((400.0+173.2) :2): Անհատական բնակելի տունը կառուցվել է 1992 թ-ին:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 189-րդ և 190-րդ հոդվածներով, 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4) ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել Ալբերտ Արմենակի Հովսեփյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Դեմիրճյան փողոց, թիվ 5 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 200.0քմ մակերեսով հողամասին կից 86.6քմ մակերեսով հողամասի նկատմամբ:
Հողամասի ընդհանուր մակերեսը կազմում է 573.2քմ, որը հանդիսանում է ընդհանուր օգտագործման հողամաս երկու սեփականատերերի՝ Ալբերտ Արմենակի Հովսեփյանի և Արարատ Ալբերտի Հովսեփյանի միջև: Ալբերտ Արմենակի Հովսեփյանի բաժնեմասը կազմում է 286.6քմ ((400.0+173.2) :2):


2. Ճանաչել Ալբերտ Արմենակի Հովսեփյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Դեմիրճյան փողոց, թիվ 5 հասցեի 286.6քմ ((400.0+173.2) :2) մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:

3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծով:

4. Սույն որոշման 1-ին կետում նշված օբյեկտն տրամադրել նոր փոստային հասցեն՝ ք. Վանաձոր, Դեմիրճյան փողոց, թիվ 5-1 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.iori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 հուլիսի 2021 թվականի N 1418

ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ՀԱՄԲԱՐԾՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 4Թ ՀԱՍՑԵՈՒՄ
ԳՏՆԿՈՂ ՌՈՒԶԱՆՆԱ ՍԱՂԱԹԵԼԻ ԶԱՔԱՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՆՈՐ ՓՈՍԱՅԻՆ ՀԱՍՑԵ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ռուզաննա Սաղաթելի Զաքարյանի դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 10032020-06-0023 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4) ենթակետով՝ **որոշում եմ**.

Վանաձոր քաղաքի Համբարձումյան փողոց թիվ 4թ հասցեում գտնվող Ռուզաննա Սաղաթելի Զաքարյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասին տրամադրել նոր փոստային հասցե՝ ք.Վանաձոր, Համբարձումյան փողոց, թիվ 4-9 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՄԱՍԻԿՈՂ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հուլիսի 07
ք.Վանաձոր





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.iori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 հուլիսի 2021 թվականի N 1419

ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐ ՎԻԿԱ ԱՇՈՏ ՄՈՎՍԻՍՅԱՆԻ ԵՎ ԿԱՐԵՆ ԱՇՈՏ
ՄՈՎՍԻՍՅԱՆԻ ՀԱՄԱՐ ԶԵՌՔ ԲԵՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ (ԳՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ)
ԳՐԱՎ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ


Հիմք ընդունելով ամուսիններ Աշոտ Ռաֆիկի Մովսիսյանի և Մելինե Աշոտի Զաքարյանի դիմումը՝ իրենց անչափափաս երեխաների համար ձեռք բերվող գույքը (գնման իրավունքը) գրավ դնելու մասին, Վանաձորի համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կողմից 2021 թվականի հուլիսի 1-ին տրված դրական եզրակացությունը (հեռավար նիստ, արձանագրություն թիվ 13, կետ 1), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 39-րդ հոդվածով՝ **որոշում եմ**.

Թույլատրել Վանաձոր քաղաքի Վարդանանց փողոցի թիվ 122/2 հասցեի բնակիչներ՝ Աշոտ Ռաֆիկի Մովսիսյանին (ծնված՝ 18.07.1984թ., նույնականացման քարտ՝ 006111593, տրված՝ 02.11.2017թ., 018-ի կողմից) և Մելինե Աշոտի Զաքարյանին (ծնված՝ 29.04.1987թ., անձնագիր՝ AS 0535236, տրված՝ 21.02.2019թ., 018-ի կողմից, հաշվառված՝ Տավրոս թիվ 22 փողոց, թիվ 4 տուն) գրավ դնել իրենց անչափափաս երեխաների՝ Վիկա Աշոտ Մովսիսյանի (ծնված՝ 04.06.2015թ., ծննդյան վկայական՝ ԱԲ 396125, տրված՝ 09.06.2015թ., Վանաձորի ՔԿԱԳ տարածքային բաժնի կողմից) և Կարեն Աշոտ Մովսիսյանի (ծնված՝ 16.05.2019թ., ծննդյան վկայական՝ ԲԱ 118076, տրված՝ 17.05.2019թ., Վանաձորի ՔԿԱԳ տարածքային բաժնի կողմից) համար ձեռք բերվող Վանաձոր քաղաքի Տարոն 4 Մեքենաշինարարների փողոցի թիվ 5 շենքի թիվ 20 բնակարանի բաժնեմասերը (գնման իրավունքը):

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ՝

ՄԱՍԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հուլիսի 07
ք.Վանաձոր





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 հուլիսի 2021 թվականի N 1420

ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ԲՈՒՍԱԲԱՆԱԿԱՆ ՓՈՂՈՅ 3 ՇԵՆՔ, ԹԻՎ 1,3,4,5,6
ՀԱՍՅԵՆՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԱՐՄԵՆ ԺՈՐԱՅԻ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆԻՆ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՅՈՒՐԱՆՈՑԻ
ԶԲԱՂԵՅՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԲԱԺՆԵՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՍԲ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ
ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ
ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արմեն Ժորայի Սարուխանյանի լիազորված անձ Արտյոմ Մարտիկի Մամյանի դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման թիվ 01062021-06-0038 վկայականը, 26.08.2019թ. թիվ 5832 (նոտարական ակտի կոդ: 763-20190826-90-4122043) լիազորագիրը, ԱՐՏՅՈՒ ՍԱՔԱՆՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ ԱԶ-Ի կողմից տրված հողամասի հատակագիծը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ և 16-րդ մասերով՝ **որոշում եմ.**

1. Վանաձոր քաղաքի Բուսաբանական փողոց 3 շենքի թիվ 1, 3, 4, 5, 6 հասցեում գտնվող, Արմեն Ժորայի Սարուխանյանին սեփականության իրավունքով պատկանող 367.82քմ մակերեսով հյուրանոցի զբաղեցրած ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 251.7քմ մակերեսով հողամասից 156.6քմ մակերեսով հողամասի նկատմամբ վերականգնել և ճանաչել Արմեն Ժորայի Սարուխանյանի ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը:

2. Հողամասի սեփականության իրավունքը փոխանցված է ՀՀ հողային օրենսգրքի 04.10.2005թ. թիվ 199-Ն օրենքի 23-րդ հոդվածի պահանջի համաձայն, պայմանով, որ գույքի հետագա օտարման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումը կկատարվի վճարման պահին գործող հողամասի կադաստրային արժեքի վճարման դեպքում:

Շենքով ծանրաբեռնված հողամասի մակերեսը ընդհանուր բաժնային համամասնությամբ բաշխված է Արմեն Սարուխանյանի և Վանաձոր համայնքի միջև: 251.7 քմ մակերեսով հողամասից 156.6քմ մակերեսով հողամասը կազմում է Արմեն Սարուխանյանի մասը, որը կազմում է 157/252-րդ բաժնեմասը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՄԱՍԻԿՈՆ ԱՆԼԱՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Գաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 հուլիսի 2021 թվականի N 1421

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 27 ԱՊՐԻԼԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 875
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կադաստրի կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 25.06.2021թ. թիվ Կ-25062021-06-0100 որոշումը, ԱՐՏՅՈՒՄ ՍԱՔԱՆՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագիծը շինության բնութագիրը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ որոշում եմ.

Վանաձոր համայնքի ղեկավարի 27 ապրիլի 2021 թվականի «Վանաձոր քաղաքի Բուաբանական փողոց, թիվ 3 հասցեում գտնվող նախկին պետական բնակելի ֆոնդ հանդիսացող շենքի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը ճանաչելու, շինության գործառնական նշանակությունները փոխելու և փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 875 որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

1. Որոշման 1-ին կետը «հողամասի» բառից հետո լրացնել «որից շենքով ծանրաբեռնված հողամասի մակերեսը ընդհանուր բաժնային համամասնությամբ բաշխված է Արմեն Սարուխանյանի և Վանաձոր համայնքի միջև: 251.7 քմ մակերեսով հողմասից 95.1քմ մակերեսով հողամասը կազմում է Վանաձորի համայնքի մասը, որը կազմում է 95/252-րդ բաժնեմասը: Վանաձոր համայնքի հողամասի հողամասի ընդհանուր մակերեսը կազմում է 1231.5քմ (1483.2-251.7), ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով 251.7քմ մակերեսով հողամասից Վանաձոր համայնքի բաժնեմասը կազմում է 95.1քմ» բառերով:

2. Վանաձոր համայնքի ղեկավարի 27 ապրիլի 2021 թվականի թիվ 875 որոշման հատակագիծը փոխարինել համայնքի ղեկավարի կողմից հաստատված նոր հատակագծով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՄԱՍԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 հուլիսի 2021 թվականի N 1422

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԼԵՈՅԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 33/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՆՈՐԻԿ ՍԵՐՅՈԺԱՅԻ ՄՈՒՐԱՊՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԵՐԿՈՒ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐ ՏԱՐԱՆՋԱՏԵԼՈՒ ԵՎ ՓՈՍԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Նորիկ Սերյոժայի Մուրադյանի լիազորված վարդան Սամվելի Ղալթախյանի դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 04042017-06-0021 վկայականը, 17.06.2021թ. տրված թիվ 38 ԱԱ 3445808 (նոտարական ակտի կող: 741-20210621-67-5181203) լիազորագիրը, ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱԶ-ի կողմից տրված հատակագծերը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2) ենթակետով և 33-րդ կետով՝ **որոշում եմ. 0**

1. Տարանջատել Վանաձոր քաղաքի Լեոյի փողոց թիվ 33/1 հասցեում գտնվող, Նորիկ Սերյոժայի Մուրադյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասը և դրա վրա գտնվող շինությունները՝ համաձայն ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱԶ-ի կողմից տրված թիվ 1 և թիվ 2 հատակագծերի:

2. Վանաձոր քաղաքի Լեոյի փողոց թիվ 33/1 հասցեում գտնվող տարանջատված գույքին տրամադրել փոստային հասցեներ.

ա) 0.01095հա մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շինության փոստային հասցեն՝ ք. Վանաձոր, Լեոյի փողոց, թիվ 33/1 բնակելի տուն (հատակագիծ թիվ 1).

բ) 0.04219հա մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շինությունների փոստային հասցեն՝ ք. Վանաձոր, Լեոյի փողոց, թիվ 33/1-1/4 բնակելի տուն (հատակագիծ թիվ 2):

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՄԱՍԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.iori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 հուլիսի 2021 թվականի N 1423

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 15-Ի
<<ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>>
ԹԻՎ 32 ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով հաստատված եռամսյակային բաշխումները և հաշվի առնելով գնումների պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված գնման առարկաների բնութագրերի նախագիծը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Գնումների մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2017թ ապրիլի 13-ի «Գնումների պլանի ձևը, դրա լրացման, հաստատման և հրապարակման կարգը հաստատելու մասին» թիվ 390-Ն որոշմամբ հաստատված թիվ 3 հավելվածով՝ **որոշում եմ**.

Վանաձոր համայնքի ղեկավարի 2021 թվականի հունվարի 15-ի <<Վանաձոր համայնքի գնումների պլանը հաստատելու մասին>> թիվ 32 որոշման հավելվածում կատարել լրացում՝ համաձայն հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՄԱՍԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հուլիսի 08
Ք.Վանաձոր





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.iori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 հուլիսի 2021 թվականի N 1424

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԳՈՐԾԱՐԱՆԱՅԻՆ ՓՈՂՈՑ 2-ՐԴ ՓԱԿՈՒՂԻ ԹԻՎ 2
ՀԱՍՑԵՆՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՐՏԱԿ ՍԱՄՎԵԼԻ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻՆ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ
ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՃԵՏՎԱԾ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ,
ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԲԱԶԱՆ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՐՊԵՍ
ՉՈՐՍ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐ ՏԱՐԱՆՋԱՏԵԼՈՒ,
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ
ԿԱՌՈՒՅՎԱԾ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ
ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԱՁՈՐ
ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ
ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արտակ Սամվելի Թադևոսյանի դիմումը, ՀՀ Ո ԱՎՎ Վանաձոր քաղաքի Տարոնի անձնագրային բաժանմունքի կողմից 21.05.2021թ. տրված թիվ 8/13-854 տեղեկանքը, 03.12.2020թ. տրված թիվ ԲԱ327965 պետական վկայականն ամուսնության մասին, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 2005807 վկայականը, ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի գլխավոր հատակագծի լրամշակման նախագիծը, «ԻՆԷՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասերի հատակագծերը, շինությունների բնութագրերը, եզրակացությունը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ, 10-րդ, 11-րդ, 17-րդ կետերով և 18-րդ կետի գ) ենթակետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2) ենթակետով և 33-րդ կետով՝ **որոշում եմ.**

- Հաստատել Վանաձոր քաղաքի Գործարանային փողոց 2-րդ փակուղի թիվ 2 հասցեում գտնվող Արտակ Սամվելի Թադևոսյանին սեփականության իրավունքով պատկանող արտադրական բազայի զբաղեցրած՝ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 0.886հա մակերեսով հողամասի ճշտված սահմանները՝ համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:
 - Տարանջատել Վանաձոր քաղաքի Գործարանային փողոց 2-րդ փակուղի թիվ 2 հասցեում Արտակ Սամվելի Թադևոսյանին սեփականության իրավունքով պատկանող արտադրական բազան և դրանով զբաղեցված հողամասը՝ համաձայն «ԻՆԷՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրված թիվ 1, թիվ 2, թիվ 3 և թիվ 4 հատակագծերի:
 - Վանաձոր քաղաքի Գործարանային փողոց 2-րդ փակուղի թիվ 2 հասցեում գտնվող տարանջատված գույքին տրամադրել փոստային հասցեներ.
- ա) 0.46196հա մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող 168.38քմ մակերեսով շինությունների փոստային հասցեն՝ ք.Վանաձոր, Գործարանային փողոց 2-րդ փակուղի, թիվ 2 արտադրական բազա

(հատակագիծ թիվ 1):

բ) 0.18114 հա մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող 423.08 քմ մակերեսով շինությունների փոստային հասցեն՝ ք.Վանաձոր, Գործարանային փողոց 2-րդ փակուղի, թիվ 2-1 գյուղատնտեսական արտադրական նշանակության օբյեկտներ (հատակագիծ թիվ 2):

գ) 0.10292 հա մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շինության փոստային հասցեն՝ ք.Վանաձոր, Գործարանային փողոց 2-րդ փակուղի, թիվ 2-2 գյուղատնտեսական արտադրական նշանակության օբյեկտ (հատակագիծ թիվ 3):

դ) 0.13998 հա մակերեսով հողամասի փոստային հասցեն՝ ք.Վանաձոր, Գործարանային փողոց 2-րդ փակուղի, թիվ 2-3 հողամաս (հատակագիծ թիվ 4):

4. Ճանաչել օրինական սույն որոշման 3-րդ կետի ա) ենթակետում նշված Վանաձոր քաղաքի Գործարանային փողոց 2-րդ փակուղի, թիվ 2 հասցեում գտնվող, Արտակ Սամվելի Թաղևոսյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը չխախտող, քաղաքացիների կյանքին ու առողջությանը վտանգ չսպառնացող, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներից դուրս, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող ինքնակամ կառուցված 13.8 քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 12.71 քմ) գյուղատնտեսական արտադրական նշանակության հավանոցը՝ համաձայն հատակագծի:

5. Արտակ Սամվելի Թաղևոսյանի կողմից օրինականացման համար սահմանված վճարը՝ 13.8 քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 12.71 քմ) գյուղատնտեսական արտադրական նշանակության հավանոցի համար 34640 (երեսունչորս հազար վեց հարյուր քառասուն) դրամ գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:

6. Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը սույն որոշման 3-րդ կետի դ) ենթակետում նշված տարանջատված Վանաձոր քաղաքի Գործարանային փողոց 2-րդ փակուղի, թիվ 2-3 հասցեում գտնվող Արտակ Սամվելի Թաղևոսյանին սեփականության իրավունքով պատկանող 0.13998 հա մակերեսով հողամասի նկատմամբ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ՄԱՍԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 հուլիսի 2021 թվականի N 1425

ԱՆԳՈՐԾՈՒՆԱԿ ԱՄԱԼՅԱ ՍԵԴՐԱԿԻ ԴԱՆԻԵԼՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Մագդալինա Արիստակեսի Դադյանի դիմումը՝ իր անգործունակ մոր՝ Ամալյա Սեդրակի Դանիելյանին պատկանող գույքը օտարելու մասին, Վանաձորի համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կողմից 2021 թվականի մայիսի 7-ին (արձանագրություն թիվ 9, կետ 6) տրված եզրակացությունը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 39-րդ հոդվածով՝ **որոշում եմ**.

Վանաձոր քաղաքի Նժդեհի փողոցի թիվ 9 շենքի թիվ 9 բնակարանի բնակիչ Մագդալինա Արիստակեսի Դադյանին (ծնված՝ 31.07.1952թ., անձնագիր՝ AS 0382329, տրված՝ 01.10.2018թ., 066-ի կողմից) թույլատրել օտարելու իր անգործունակ մոր՝ Ամալյա Սեդրակի Դանիելյանին (ծնված՝ 29.10.1927թ., անձնագիր՝ AN 0625445, տրված՝ 23.08.2013թ., 018-ի կողմից) պատկանող ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի Աբեղյան փողոց թիվ 66 բնակելի տունը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հուլիսի 08
ք. Վանաձոր





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 հուլիսի 2021 թվականի N 1426

ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ Վ. ՏԵՐՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 6/28-1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ,
ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱԶՎԱԾ ՄԵՏԱՂԱԿԱՆ
ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԿԱՐԻՆԵ ԼԵՎՈՆԻ
ՀԱԿՈՔՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Կարինե Լևոնի Հակոբյանի 23.11.2020թ. թիվ 067/5910 դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 26032021-06-0071 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի դ) և ե) ենթակետերով՝ **որոշում եմ.**

1. Վանաձոր քաղաքի Վ. Տերյան փողոց թիվ 6/28-1 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 19.43քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 18.53քմ) մետաղական ավտոտնակը 40810 (քառասուն հազար ութ հարյուր տասը) դրամով և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ 21.0քմ մակերեսով հողամասը 61740 (վաթսույնմեկ հազար յոթ հարյուր քառասուն) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Կարինե Լևոնի Հակոբյանին:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Կարինե Հակոբյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել մետաղական ավտոտնակի և հողամասի առուվաճառքի պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հուլիսի 08
Ք. Վանաձոր





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 հուլիսի 2021 թվականի N 1427

ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ԶՈՒԽԱԶՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՄԱՍՈՒՄ
ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ
ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14³-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1) ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Փոխել Վանաձոր քաղաքի Զուխաջյան փողոցի արևմտյան մասում գտնվող 0.0057հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողերից՝ հասարակական կառուցապատման հողերի:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասին տրամադրել փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Զուխաջյան փողոց թիվ 26/4-9 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ՝

ՄԱՍԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հուլիսի 08
ք. Վանաձոր





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 հուլիսի 2021 թվականի N 1428

ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱՐՈՆ-2 ՈՒԿՐԱԽՆԱԿԱՆ ՊՈՂՈՏԱՅԻ ԵՎ ՕԳՈՍՏՈՍԻ
23-Ի ՓՈՂՈՑԻ ՀԱՏՄԱՆ ՎԱՅՐԻ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ
ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱԽՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ
ՓՈՏԱՅԻՆ ՀԱՍՅԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14³-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1) ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Փոխել Վանաձոր քաղաքի Տարոն-2 Ուկրաինական պողոտայի և Օգոստոսի 23-ի փողոցի հատման վայրի հյուսիսային մասում գտնվող 0.00627հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողերից՝ հասարակական կառուցապատման հողերի:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասին տրամադրել փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Օգոստոսի 23-ի փողոց, թիվ 1/1 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՄԱՍԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հուլիսի 08
ք. Վանաձոր





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.ori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 հուլիսի 2021 թվականի N 1429

ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ՎԵՐԱԾՆՆԴԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 87 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ
ԽԱՆՈՒԹԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սասուն Սուրենի Թունյանի դիմումը, 27.04.2021թ. ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 1769 (նոտարական ակտի կոդ: 763-20210422-84-5061112) և թիվ 1770 (նոտարական ակտի կոդ: 763-20210422-84-5061039) վկայագրերը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1178194 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի դ) ենթակետով՝ **որոշում եմ.**

Վանաձոր քաղաքի Վերաձննդի փողոց թիվ 87 հասցեում գտնվող խանութին տրամադրել նոր փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Վերաձննդի փողոց, թիվ 8/4-1 խանութ:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ՝

ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հուլիսի 08
ք.Վանաձոր





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Սեֆի 22, ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.ori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 հուլիսի 2021 թվականի N 1430

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱՐՈՆ-4, ԲԵԼԱՌՈՒՍԱԿԱՆ ԹԱՂԱՄԱՍ ԹԻՎ 30/1-2/1
ՀԱՍՑԵԻՆ ԿԻՑ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

